

Մեր հեթանոսութեան շրջանի սովորոյթը նման է միւս հեթանոսաց ըրածին. Մաժանայ հոգեհացն անոր գերեզմանին վրայ իսկ կ'ուտուէր՝ ինչպէս ըսինք (353): Իսկ քրիստոնէութեան ժամանակ: Հինն անձանօթ է ինձ, եւ հաւանական է՝ թէ միւս քրիստոնէից պէս եւ տեառնականին նման կը կատարուէր «ի դուռն եկեղեցւոյն», ինչպէս իւր դարուն համար կը վկայէ Շնորհալին (Ընդհ. 160): Բայց վերոյիշեալ արձանագրութեանց համեմատ՝ առաւելապէս կը տրուէր վանքերու մէջ. որով եւ առիթ կը դառնար շահասէր հակառակութեանց՝ աշխարհիկ քահանայից կողմանէ: Մի. Գոշ այդ վէճին մէջ վերջնոց իրաւունք տուաւ՝ ըսելով. «Զհոգեհանգիստ ի վանս առնել՝ ոչ է ըստ օրինաց դատաստանի գրոց», պատճառ բերելով՝ որ վանքերու մէջ մասկերութիւն չկայ, կամ լաւ եւս՝ լինելու չէր, զի կարարդէն (աստ, 303-7): Ինք կ'ուզէ՝ որ աշխարհի մէջ գենուն, եւ վանքերու պատկանեալ բաժինը տան: Բայց ի վերջոյ կը զիջանի տիրող սովորութեան, եւ կ'ըսէ՝ որ եթէ նուիրատուն իւր կարողութեան չափաւորութեան համար կամ «յադագս յուսոյ» վանք տանի անասունը եւ հոն հաւատացելոց կերցնէ, աշխարհիկ քահանայք չհակառակին (Պատ. 95-6):